

**BOLSHEVIKS
AND BRITISH JEWS**
(In Armenian)

By
Sharman Kadish

Introduction, Preface, Translation, Annotation
By
Edic Bagdasarian

Armenian Research Center
ISBN: 978-1-990573-47-7
www.Edic-Baghdasarian.com
Toronto 2025 Canada

**ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԸ
և
ԲՐԻՏԱՆԱՑԻ ՀՐԵԱՆԵՐԸ**

Շարմըն Քեյդիշ

Առաջաբանը, Ներածությունը, թարգմանությունը և
ծանոթագրությունները՝

Էդիկ Բաղդասարյանի

Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոն

ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԸ
և
ԲՐԻՏԱՆԱՑԻ ՀՐԵԱՆԵՐԸ

**Անգլո-հրեական համայնքը,
Բրիտանիան և ռուսական
հեղափոխությունը**

Շարմըն Բեյդի

**Առաջաբանը, Ներածությունը, թարգմանությունը և ծա-
նոթագրությունները՝**

Էդիկ Բաղդասարյանի

Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոն

ISBN: 978-1-990573-47-7

www.Edic-Baghdasarian.com

Տորոնտո – 2025 - Կանադա

Բովանդակություն

Առաջաբան	7
Հրեաների ծագումը	13
Գլուխ 1. «Բոչեն, Բուլժին և հրեա թիրախը». Ռուսական հեղափոխությունը և հակասեմականության աճը Բրիտանիայում	39
Բրիտանական կառավարությունը, միջամտությունը և հրեաները Ռուսաստանում.....	45
Թայմզը և Արձանագրությունները.....	82
«Մորնինգ Փոստ».....	87
Բուլժիկներ և Պրոտոֆաշիստներ.....	102
Օտարականների հարցը և	116
«բուլժիկյան ուրվականը».....	116
Հակա-Օտարականների բանավեճերը 1917 թ.	130
Գլուխ 2. Ստրկությունից մինչև ազատություն՝ ԼՆ.....	139
«Վեսթ Էնդ»-ի հրեականությունը և	139
ռուսական հեղափոխությունը	139
Փետրվարյան Հեղափոխությունը	146
«Հոկուս-պոկուս անարխիզմ».	158
Փետրվարից մինչև հոկտեմբեր.....	158
Բուլժիկական Հեղափոխությունը	169
Բրիտանական միջամտությունը և Ռուսական Քաղաքացիական Պատերազմը	188

Գլու՜ 3. «Մեր սեփականը». «Վեստ Էնդի» հրեաները և ռուսական հեղափոխությունը 199

Օգնություն, Փախստականներ, Վերակառուցում	201
Վոլֆի «Հանգիստ դիվանագիտությունը» - Փարիզի Խաղաղության Համաժողովը, 1919 թ.	218
Ուկրաինա	221
Սպիտակները	230
Համայնքային ինքնապաշտպանություն	237
Հանրային Բողոք.....	254
Ձեռքերը հեռու Ռուսաստանից.....	260
«Տասնի տառը».....	264
«Տասի նամակի» նշանակությունը.....	276
այլընտրանքային տեսակետներ	276

Գլու՜ 4. «Սիոնիզմն ընդդեմ բուլլիզմի, պայթար հրա ժողովրդի հոգու համար» 281

«Զարոգչության քարտը». Բրիտանիայի կառավարությունը, բալֆուրի հռչակարգը և ռուսական հեղափոխությունը.....	288
Հռչակագրից հետո.....	296
«Սիոնիստ բուլլիկներ»	298
Վայզմանի «Լուռ դիվանագիտությունը»	306
Բալֆուրի հռչակագրից և	316
բուլլիկյան հեղափոխությունից հետո.....	316
Անգլիասիոնիստները ընդդեմ բրիտացի հրեաների. Ռուսական հեղափոխության ազդեցությունը անգլոհրեական բանավեճի վրա	319
Հակասիոնիստները և հեղափոխությունը.....	320

Սիոնիստները և հեղափոխությունը	328
Եզրակացություն	338
Գլուխ 5. Հրեա բոլշևիկներ	345
Իսթ-Էնդի հրեականությունը և ռուսական	345
հեղափոխությունը	345
Յիդիշ Մամումը և Ռուսական Հեղափոխությունը	345
Փետրվարից հոկտեմբեր	350
Բոլշևիկյան հեղափոխություն	354
Բրիտանական միջամտությունը և Ռուսաստանի	360
քաղաքացիական պատերազմը	360
Ընկերական օտարականներ և Չորակոչի Հարցը	373
Օտարերկրյա հրեաների պաշտպանության կոմիտե	373
Կոնվենցիոնիստները	388
Բաժանված ընտանիքներ	395
«East End» ընդդեմ «West End»	397
Հետգրություն՝ բոլշևիկյան հեղափոխությունից հետո	400
Հրեական լեգեոն	406
Հրեա Բոլշևիկներ	417
Եզրակացություն	441
Գրականություն	455
Հապավումներ	465
ՎԵՐՋ	467

Առաջաբան

Էդիկ Բաղդասարյան

Մինչ այժմ տողերիս հեղինակը հրատարակել է բազմաթիվ նյութեր թե՛ Հայոց ցեղասպանության, թե՛ Հրեաների և թե՛ Թուրքերի մասին՝ ներկայացնելով այդ նյութերի մասին պատմաբանասիրական և գիտական մանրամասնություններ¹:

Մեր հետազոտությունների ընթացքում հանդիպել ենք բազմաթիվ կարևոր և հետաքրքիր հրատարակումների, որոնք ուղղակիորեն կամ կողմնակի վերաբերում են Մեր Հայերիս, հրեաներին, և համաշխարհային մակարդակով կարևոր պատմական երևույթներին, մանավանդ նրանք, որոնք ինչ-որ կերպ առնչվում են հրեաներին, նաև նրանց շատ նշանակալի դերին այդ իրադարձություններում:

Անկասկած, հրեաները համարվում են աշխարհի ամենաքննարկելի ժողովուրդներից մեկը: Այսօր, համարեա անհնար է ուսումնասիրել և վերլուծել մասնավորաբար Միջին Արևելքի ժողովուրդների, ազգերի, էթնիկական զանազան խմբերի հասարակական-քաղաքական, հասարակական-տնտեսական և հասարակական-մշակութային պատմությունն ու ներկա իրավիճակը՝ առանց ի նկատի ունենալով թե՛ այդ տարածաշրջանի, և թե՛ համաշխարհային մակարդակով Հրեաների ակնառու դերակատարությունն ու հսկայական ներդրումը, լինի այդ դրական կամ բացասական, իհարկե նկատի առնելով տարբեր մոտեցումները այդ փոքաթիվ, սակայն մեծ ժողովրդի հանդեպ:

Մենք մեր նախկին բազմաթիվ աշխատությունների իսկական

¹ - Տեսնել մեր պաշտոնական կայքէջը՝ www.Edic-Baghdasarian.com:

մասը հատկացրել էինք Հայ ժողովրդի պատմության զանազան դրվագներին, իսկ այդ բնագավառներին առնչվող հետազոտություններ էինք կատարել մի շարք այլ թեմաներով, որոնցից մի քանիսը վերաբերվում էին Հայերի ու Հայաստանի հարևան ազգերի ու ժողովուրդների պատմությանը, որոնցից կարելի է հիշատակել այսպես կոչված «Ազգերիններին»², Քրդերին³, Թուրքերին⁴, Պարսիկներին⁵ հատկացված աշխատություններ:

² - Էդիկ Բաղդասարյան, “Աղվանք, Ադրբեջան, Ծավալապաշտություն, Ոճրագործություն”, Տորոնտո, Հայերեն, 2014: և Անգլերեն՝ Edic Baghdasarian, “Aran, Azerbaijan, Expansionism and Crime”, in English, Toronto, 2016.

³ - Էդիկ Բաղդասարյան, “Արարատյան Հանրապետություն”, Պարսկերեն, Տորոնտո, 2016.

⁴ - Էդիկ Բաղդասարյան Թուրքերի ծագումը, Պարսկերեն, Երկու հատորով, Հատոր 1 և 2, Տորոնտո, 2020.

منشاء ترکان - به فارسی - در دو جلد - جلد ۱ و ۲ - تورونتو ۱۳۹۸ (2020)

⁵ - Էդիկ Բաղդասարյան, “Հայ-Իրանական պատմական առնչությունները, Հինգ հատորով, հատոր 1, Հայ-Իրանական պատմա-քաղաքական հարաբերությունները, Պարսկերեն, Տորոնտո,, 2018.

تاریخ مناسبات تاریخی ارمنستان و ایران در ۵ جلد، جلد ۱ ، تاریخ مناسبات سیاسی ارمنستان و ایران ، فارسی، تورونتو ۱۳۹۷. (2018)

Հայ-Իրանական պատմական առնչությունները, Հինգ հատորով, հատոր 2, Հայ-Իրանական լեզվական կապերը, Պարսկերեն, Տորոնտո,, 2018.

تاریخ مناسبات تاریخی ارمنستان و ایران در ۵ جلد، جلد ۲ ، تاریخ مناسبات فرهنگی ارمنستان و ایران، زبانهای ایرانی و ارمنی ، فارسی، تورونتو ۱۳۹۷. (2018)

Հայ-Իրանական պատմական առնչությունները, Հինգ հատորով, հատոր 3, Հայ-Իրանական գրական կապերը, Պարսկերեն, Տորոնտո,, 2018.

تاریخ مناسبات تاریخی ارمنستان و ایران در ۵ جلد، جلد ۳ ، تاریخ مناسبات ادبی ارمنستان و ایران، فارسی ، تورونتو ۱۳۹۷. (2018)

Հայ-Իրանական պատմական առնչությունները, Հինգ հատորով, հատոր 4, Հայ-Իրանական բանահյուսություն և հավատալիքներ, Պարսկերեն, Տորոնտո,, 2018.

تاریخ مناسبات تاریخی ارمنستان و ایران در ۵ جلد، جلد ۴ ، تاریخ مناسبات فرهنگی ارمنستان و ایران، فرهنگ عامیانه، فارسی ، تورونتو ۱۳۹۷. (2018)

Հայ-Իրանական պատմական առնչությունները, Հինգ հատորով, հատոր 5, Իրանահայ մշակույթ, Պարսկերեն, Տորոնտո,, 2018.

تاریخ مناسبات تاریخی ارمنستان و ایران در ۵ جلد، جلد ۵ ، تاریخ فرهنگی ارمنیان ایران، فارسی ، تورونتو ۱۳۹۷. (2018)

Այսպես էլ անհրաժեշտ համարեցինք նաև ուսումնասիրել Հրեաների բազմադարյա պատմությունը, թեև շատ հակիրճ ու ամփոփ, որը անխոսափելիորեն դարձավ երու հատորները:

Հայ և Հրեա ժողովուրդները ունեն բազմաթիվ նմանություններ՝ պատմական, հասարակական և մշակութային բնագավառներում, և նույնպես ունեն իրարից զանազանվող հատկանիշներ ու դրվագներ: Հրեաներն էլ հայերի նման ցրված են աշխարհով մեկ: Ինչպես հայերի հարաբերությունները զանազան ազգերի հետ՝ նույնպես էլ հրեաների պատմությունը տարբեր երկրներում և նրանց շփումներն ու փոխադարձ ազդեցությունները մյուսների հետ հետաքրքրական նյութ է: Հրեաները չափազանք մեծ և կաևոր դեր են ունեցել և ունեն ազգային, ժողովրդական և միջազգային շատ ազդարեցներում: Նրանք էլ մեզ հայերիս նման ունեն բազմահազարամյա պատմություն: Հրեաները հուդայական կրոնին են հետևում, սակայն բոլոր հրեաները չեն պատկանում մեկ էթնիկական խմբի, հրեաները կարող լինել Իսրայելցի-պաղեստինցի, սեամորթ ֆրիկացի, դեղին ազգին պատկանող էթնիկական խմբերի անդամ, լինել խազարների շառավիղներ և այլ, և այլն:

Այդուամենայնիվ, հողագնդի վրա ապրող բոլոր մարդիկ ի սկզբանե արժանի են մարդկային հարգանքի, իրավունք ունեն ազատ ապրել, ազատ արարել, մասնակցել համաշխարհային քաղաքակրթության զարգացմանը և այլն: Հրեաների ներդրումը այդ տեսանկյունից անհերքելի է: Սույն աշխատության հաջորդ էջերում ներկայացվել են նրանց հասարակական, մշակութային ու գիտական մեծ ուժն ու ներդրումը աշխարհի պատմության մեջ՝ մասավորապես Անգլիայում և Ռուսաստանում:

Հայ և հրեա ժողովուրդները անցել են պատմական դաժան ուղի, հազարավոր տարիներ երկուսն էլ ենթարվել են ազգային, կրոնական, հասարակական և քաղաքական բռնաճնշումների, զրկանքների, հալածանքների և ամենասարսափելին այն է որ 20-րդ դարում երկուսն էլ անցել են ցեղասպանության անմարդկային դաժան ուղին: Եվ այդ պատճառով նրանք արժանի են շատ ավելի ընդարձակ ապահով կյանք վարելու հնարավորությանը, իսկ երբ

աշխարհը նրանց չի տրամադրում այդ առիթն ու պահը, և քանի որ աշխարհում միշտ էլ գործել և գործում է «Ուժը արդարություն է» (*Might is Right*) սկզբունքը, նրանք իրավացի են դիմելու այդ սկզբունքին՝ իրենց գոյությունը, մարդկային արժանապատվությունը, ազգային-էթնիկական արժեքները պահպանելու և զարգացնելու ուղղությամբ:

Մենք հավատում ենք, որ տյալ ժողովուրդ առաջին հերթին ինքն է պատասխանատու իր կյանքի բոլոր բնագավառների իրադարձությունների ծավալմանը, ապա որտաքին ազդեցություններն ու միջամտությունները: Ուստի նրանք են բախտավոր, որոնք ունեն ազգային ծրագիր, իրենց ներկա և ապագա սերունդներին ապահովելու համար ավելի բարգավաճ, ու ապահով կյանք ու հեռավոր կանաչ հորիզոններ: Այդ առումով հրեաները չափազանց առաջ են անցել աշխարհի շատ այլ ժողովուրդներից:

Ներկա աշխատությունը պատկանում է Շերմըն Քեյդի-շին, Լոնդոնի համալսարանից: Նա այստեղ ուսումնասիրում է Հրեաների դերակատարությունը Անգլիայից մինչև Ռուսաստան: Դիրքը հրատարակվել է 1992 թվականին:

Քեյդիշը ծնվել է 1959թ. Լոնդոնում, Անգլիա, ռուս հրեական ծագմամբ: Նա ժամանակակից գիտնական, հեղինակ, պատմաբան և պահպանության գործիչ է: Նրա հայրը նկարիչ Նորման Մորիս Քեյդիշն էր: Նա կրթություն է ստացել Լոնդոնի համալսարանական քոլեջում և Օքսֆորդի Սուրբ Անտոնի քոլեջում, որտեղ ստացել է իր դոկտորական կոչումը ժամանակակից պատմության գծով: 1986-1987 թվականներին նա եղել է Երուսաղեմի Եբրայական համալսարանի Շեյնբրունի այցելու հետգոկտորական գիտաշխատող: Նրա առաջին գիրքը՝ բոլշևիկների և բրիտանացի հրեաների մասին, 1993-ին արժանացել է «Ընտրության լավագույն ակադեմիական գրքի» մրցանակի:

1991 թվականին, Լոնդոնում իր կազմակերպած կոնֆերանսից հետո, Քեյդիշը հիմնեց Մեծ Բրիտանիայում և Իռլանդիայում հրեական հուշարձանների աշխատանքային խումբը, որը ճնշում

գործադրեց երկրում պատմական սինագոգների, գերեզմանոցների և հրեական հետաքրքրություն ներկայացնող այլ վայրերի պաշտպանության համար: Սա հրեական ժառանգության բրիտանական բարեգործական կազմակերպության նախորդն էր, որը նա հիմնադրել և ղեկավարել է 2004-ից 2016 թվականները:

Լոնդոնի և Մանչեսթերի համալսարաններում դասավանդելով ժամանակակից հրեական պատմության և հրեական արվեստի ու ճարտարապետության բակալավրի և ասպիրանտուրայի դասընթացներ, Քեյդիշը 1987 թվականից աշխատել է ժառանգության ու լորտում՝ ինչպես կամավորական ոլորտում, այնպես էլ մասնավոր պրակտիկայում:

Նրա մի քանի աշխատություններն են.

- Բուշնիկները և բրիտանացի հրեաները Լոնդոն և Պորտլենդ, Ֆրենկ Կաս , 1992թ.: ISBN 0-7146-3371-2
- Լավ հրեա և լավ անգլիացի. հրեական տղաների և աղջիկների բրիգադ, 1895-1995 Լոնդոն, Վալենտին Միտչել , 1995 թ.
- Երուսաղեմի կառուցում. հրեական ճարտարապետությունը Բրիտանիայում Լոնդոն, Վալենտին Միտչել , 1996 թ.
- Հրեական ժառանգություն Անգլիայում; An Architectural Guide Swindon, English Heritage , 2006 թ
- Հրեական ժառանգություն Ջիբրալթարում, Ճարտարապետական ուղեցույցի ընթերցում, Spire Books , 2007 թ.
- Բրիտանիայի և Իռլանդիայի սինագոգները. ճարտարապետական և սոցիալական պատմություն Նյու Հեյն և Լոնդոն, Յեյլի համալսարանի հրատարակություն , 2011 թ.
- Հրեական ժառանգությունը Բրիտանիայում և Իռլանդիայում. ճարտարապետական ուղեցույց Սվինդոն, պատմական Անգլիա , 2015 թ.

Նա ունի նաև Բազմաթիվ հոդվածներ ակադեմիական հանրաճանաչ ամսագրերում և մամուլում:

Հարգելի ընթերցողների հետաքրքրությունը բավարարելու ակնկալիքով, հույս ունենք մեզ կիրառեցին սույն աշխատության

*մասին իրենց մտորումների և կառուցողական առաջարկների
մասին:*

Էդիկ Բաղդասարյան

Հունվարի 31, 2025թ.

Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոն

Տորոնտո, Կանադա

www.Edic-Baghdasarian.com

edbagh@gmail.com